## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ Հայաստանի Հանրապեպետություն Լոռու մարզ
Խնկոյան համայնք, փողոց 1 թիվ 19

☎ 093476682

«19» սեպտեմբերի 2017թ.

N 96

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ պարոն
Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ եմ ներկայացնում Խնկոյան համայնքի ավագանու 14.09.2017թ. N 25, N 26, N 27-Ա որոշումները:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար Վ. Համբարձումյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ. Խնկոյան 1 փողոց 19 շենք
հեռ. 093476682
Էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> սեպտեմբերի 2017 թվականի N 25

### ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, Խնկոյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Խնկոյան համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի օրակարգը.

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Խնկոյան համայնքի 2017 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի

1. Խնկոյան համայնքի ղեկավարի 22.08.2017թ. N 15 որոշումով սոցիալապես անապահով համայնքի բնակչի ընտանիքին հարազատի հուղարկավորության ծախսերը հոգալու նպատակով հատկացված <<Դրամական օգնություն հատկացնելու մասին>> որոշմանը հավանություն տալու մասին.

2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավագյան Վարդուհի Արամայիսի | | | |
| Հարությունյան Շիրակ Աղասու | | | |
| Մանուկյան Սևակ Վազգենի | | | |

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________ (ստորագրություն) Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ (անուն, ազգանուն)

Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, գ. Խնկոյան 1 փ. 19 շ., հեռ. 093476682

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2017 թվականի N 26

### ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՐԱԶԱՏԻ ՀՈՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 17-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով, համայնքի ավագանին

**որոշում է.**

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 22.08.2017 թվականի թիվ 15 որոշումով համայնքի սոցիալապես անապահով ընտանիքին հարազատի հողարկավորության ծախսերը հոգալու նպատակով հատկացված <<Դրամական օգնություն հատկացնելու մասին>> համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավագյան Վարդուհի Արամայիսի | | | |
| Հարությունյան Շիրակ Աղասու | | | |
| Մանուկյան Սևակ Վազգենի | | | |

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 14
գ. Խնկոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ Խնկոյան,
հեռ. 093476682 էլ. փոստ՝ Khnkoyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«14» սեպտեմբերի 2017 թվական, 27-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումը և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը

**Խնկոյան համայնքի ավագանին որոշում է.**

1. Բավարարել համայնքի բնակչի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավագյան Վարդուհի Արամայիսի | | | |
| Հարությունյան Շիրակ Աղասու | | | |
| Մանուկյան Սևակ Վազգենի | | | |

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Կ.Տ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Խնկոյան համայնքի ավագանու

2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 27-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿՉԻ

1. Էթերա Հովսեփյան Կարենի **քսանհինգ հազար** դրամ, / սոց. օգնություն /:

ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ______________ (ստորագրություն) Ա. ԲԱԲԱՅԱՆ (անուն, ազգանուն)